ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/165

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 08.11.2018թ. թիվ 26-3/20362-18 գրությամբ Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 06.11.2018թ. թիվ 1/18-2167872-18 գրության հիման վրա, 08.11.2018թ. Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 06.11.2018թ. թիվ 1/18-2167872-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և Աննա Աղաջանյան Հայրապետի ԱՁ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2018 թվականի հունիսի 13-ին կնքված թիվ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով «Պետության կարիքների համար արխիվացման ծառայությունների մատուցման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մաս հանդիսացող հավելված № 1-ի համաձայն՝ Կատարողը պարտավոր էր Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 90 աշխատանքային օրվա ընթացքում առանձնացնել պահպանության ոչ ենթակա 20833 գործ: Սակայն Պայմանագրով նախատեսված ժամկետում մատուցված ծառայությունը հիմնավորող փաստաթղթերով ներկայացվել է ընդամենը 5098 գործ, ինչպես նաև ներկայացվել է 8060 գործ, որոնք Պատվիրատուի կողմից չեն ընդունվել ակնհայտ թերությունների և սխալների պատճառով: Նշված թերությունների վերաբերյալ բազմիցս տեղյակ է պահվել Կատարողին, սակայն Կատարողը կտրականապես հրաժարվել է շտկել թերություններն ու սխալները:

Պատվիրատուն 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ-1/1-1/62949-18 գրությամբ նախազգուշացրել է Կատարողին Պայմանագրով նախատեսված պարտավորությունները ամբողջ ծավալով չկատարելու մասին:

Պայմանագրով սահմանված ժամկետում վերը նշված ծառայությունն ամբողջ ծավալով Կատարողի կողմից չի մատուցվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Ելնելով վերոգրյալից և Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 ենթակետի պահանջները, Պատվիրատուն 2018 թվականի նոյեմբերի 2-ից ստիպված է եղել միակողմանի մասնակի լուծել 2018 թվականի հունիսի 13-ին կնքված թիվ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագիրը՝ 1.510.585 ՀՀ դրամ չմատուցված ծառայության մասով:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պետական եկամուտների կոմիտեի լիազորված ներկայացուցիչ Մասիս Լալայանը:

3. <u>Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ն 16.11.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ բազմիցս ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) ուղղված իմ գրություններում նշել եմ, որ հարկադիր պարապուրդի եմ մատնված եղել, աշխատանքները կանգ են առել և պահանջել եմ, որպեսզի Կոմիտեն տրամադրի մնացած 7675 գործերը և ապահովի 20833 քանակը, սակայն Կոմիտեի կողմից այդպես էլ գործեր չեն տրամադրվել: Պայմանագրի սկզբից մինչև ավարտը Կոմիտեի քարտուղարությունը մի քանի անգամ առանց որևէ օրենքի կամ պայմանագրի կետին հղում անելու, նույն գործերի վերաբերյալ անընդհատ փոփոխված ակտեր է պահանջել, դա արվել է միտումնավոր որպեսզի ապացույցներ ունենան թե իբր իմ կատած աշխատանքներում թերություններ կան: Կոմիտեի կողմից չընդունած 8060 գործերի մեջ իրականում ոչ մի սխալ և թերություն չկա, աշխատանքները կատարվել են ժամանակին և պատշաճ որակով, քանի որ իմ կողմից ներկայացված աշխատանքները լիովին համապատասխանում են ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին:

Կոմիտեի պահանջներով իմ մասնագիտական ակտերի մեջ փոփոխություններ կատարվել են միայն ոչ էական, ձևական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ: Մասնագիտական առումով ոչինչ չի փոփոխվել՝ ոչինչ չի ավելացել և չի պակասել, ինչպես եղել է ի սկզբանե այդպես էլ մնացել է մինչև հիմա:

Անտրամաբանական և սխալ են Կոմիտեի դատողություններն ու որակավորումները ծրարների վերաբերյալ: Տեղեկացնում եմ, որ ծրարը լիովին համապատասխանում է ՀՍՏ-105-2007 «Գործավարության և արխիվային գործ. Տերմիններ և սահմանումներ» ստանդարտի 3.2.11 կետով սահմանված «մեկ հարցի կամ մեկ գործունեության ոլորտի վերաբերող փաստաթղթերի ամբողջություն կամ մեկ փաստաթուղթ՝ զետեղված առանձին կազմի (թղթապանակի) մեջ» ձևակերպմանը: Ծրարը ևս կազմ է, բացի այդ ես բազմիցս իմ գրություններով Կոմիտեից պահանջել եմ պատասխանել այս հարցին՝ եթե ըստ ՀՀ

պետական եկամուտների կոմիտեի ծրարը գործ չէ, ապա ինչ է և ինչպես պետք է կատարվի դրանց հաշվարկը, սակայն Կոմիտեի կողմից այդպես էլ որևէ պատասխան չի տրվել: Հայտնում եմ նաև, որ ծրարների վրա ևս կատարել եմ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված աշխատանքները՝ ծրարները ըստ տարեթվերի խմբավորել եմ, հաշվարկել, ընդգրկել «Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին» ակտում: «Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին» սկզբնական ակտերում ես ծրարները առանձին տողով էի գրում, հետո Կոմիտեի դիտարկումներով միացրեցի «Տնտեսական գործառնության փաստը հավաստող և հաշվապահական գրառումների համար հիմք հանդիսացող սկզբնական փաստաթղթեր՝ կից հավելվածներով դրամարկղային, բանկային փաստաթղթեր, բանկերի ծանուցագրեր և փոխանցման հանձնարարագրեր, բանկերի քաղվածքներ, աշխատանքային կարգագրեր, ունեցվածքի, հիմանական միջոցների և նյութերի ընդունման, գնման, հանձնման ու դուրսգրման ակտեր, ապրանքանյութական արժեքների հաշվառման անդորրագրեր և ապրանքագրեր, կանխավճարային հաշվետվություններ, ավտոմեքենաների ուղեգրեր, կարգագրեր և այլ» տողին:

Ի կատարումն ՀՀ վարչապետի աշխատակազմի 11.09.2018թ. թիվ 02/23.9/30377-18 հանձնարարականի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի չթվագրված գրության մեջ Կոմիտեն գրել է հետևյալը. «Ակտի 9-րդ կետում գրել է բանկային վճարման հանձնարարագրեր և ՀԴՄ կտրոններ (բոնուսներ), իրականում պետք է լիներ տնտեսական գործառնության փաստը հավաստող և հաշվապահական գրառումների համար հիմք հանդիսացող սկզբնական փաստաթղթեր՝ կից հավելվածներով (դրամարկղային, բանկային փաստաթղթեր...:»: Մինչդեռ 19-րդ և 23-րդ մերժման եզրակացությունների մեջ Կոմիտեն գրել է, որ ծրարների փաստաթղթերը չեն հանդիսանում տնտեսական գործառնության փաստը հավաստող սկզբնական փաստաթղթեր: Կոմիտեն առանց հիմնավորելու և օրենքի որևէ կետի հղում անելու գրել է, թե իբր իմ աշխատանեքնրում սխալներ և թերություններ կան, որոնք իմ կողմից չեն շտկվել: Հայտնում եմ, որ ծրարների միջի բանկային վճարման հանձնարարգրերն ու ՀԴՄ կտրոնները համապատասխանում են 351-Ն որոշման 152 կետին և անկախ նրանից, թե դրանք «Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի

առանձնացման մասին» ակտերի մեջ առանձին տողով կգրվեն թե միացված կլինեն «Տնտեսական գործառնության փաստը հավաստող և հաշվապահական գրառումների համար հիմք հանդիսացող սկզբնական փաստաթղթեր..» կետին՝ միևնույնն է մասնագիտական առումով ոչինչ չի փոխվում:

Պատասխանելով Կոմիտեի 22-րդ և 23-րդ մերժման եզրակացություններին, հայտնել եմ հետևյալը. «ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նորից ինքն իրեն հակասող մտքեր է գրում և նորից նույն 6860 գործերի մերժման համար տարբեր հիմքեր է սարքում:»:

Ծրարներից յուրաքանչյուրը իրենից շատ կարևոր փաստաթղթերի ամբողջություն է ներկայացնում, որոնց հիման վրա բյուջեից հսկայական գումարներ են դուրս գրվել: Կոմիտեն նախկինում քաղաքացիների ներկայացրած ՀԴՄ կտրոնների ընդհանուր գումարի որոշ տոկոսի չափով գումար էր վերադարձնում քաղաքացիներին, և ծրարները հենց այդ գործընթացն են արտացոլում:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ոչ մի գրությամբ, որևէ օրենքի կետով չի հիմնավորել, որ ծրարները գործ չեն, մինչդեռ ծրարներից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է՝ մեկ հարցի կամ մեկ գործունեության ոլորտի վերաբերող փաստաթղթերի ամբողջություն զետեղված առանձին կազմի մեջ: Ծրարը ևս կազմ է, այն չի կարելի շփոթել կամ համեմատել երբեմն հանդիպող ցրոն վիճակով, զանազան արկղների մեջ լցված ուղղակի միայն ՀԴՄ կտրոնների հետ, որոնք գնորդները չեն վերցրել, և որոնք իրենցից այլևս ոչինչ չեն ներկայացնում: Ի վերջո, եթե ծրարները գործ չեն, ապա ինչու է Կոմիտեն դրանք պահպանել, և եթե դրանք գործ չեն, ապա ինչպես պետք է կատարվի դրանց հաշվարկը, իմ այս հարցին ևս երբևէ պատասխան չի տրվել, միայն անտրամաբանական մերժման հիմքեր են ներկայացվել Կոմիտեի կոմղից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» գործերի պահպանման ժամկետը համաձայն ՀՀ կառավարության 351-Ն որոշման 14-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ, 41-րդ և ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 2007թ. հունիսի 14 թիվ 1-06/320-Ա հրամանով հաստատված թիվ 24-րդ և 36-րդ կետերի՝ 5 տարի է: Կոմիտեն առանց որևէ հիմնավորման 10-րդ, 18-րդ, և 21-րդ հանձնման-ընդունման արձանագրության վերաբերյալ մերժման եզրակացության մեջ

գրել է, որ իմ կողմից ներկայացված «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» գործերի պահպանման ժամկետը սխալ է նշված:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը սխալ է գրված՝ դա ակնառու է «մատուցման հասցեները» սյունակում նշված է ք. Երևան, Խորենացու 3,7, մինչդեռ մրցույթը հայտարարելիս Կոմիտեն շատ լավ գիտեր, որ արխիվացման գործեր մնացել են միայն Արտաշատում, Վեդիում և Եղեգնաձորում, բայց մատուցման հասցեն նշել է ք. Երևան Խորենացի 3,7: Անտրամաբանական է 20833 ոչնչացման ենթակա գործերից միայն 1200 գործ ունենալ ք. Երևան Խորենացի 3,7 հասցեում և տեխնիկական բնութագրի մեջ որպես ծառայությունների մատուցման վայր նշել՝ ք. Երևան Խորենացի 3,7 հասցեն:

Կոմիտեն հայտնել է, որ.

ա) ոչնչացման համար իմ կողմից առանձնացվել են ապահովադիրների գործեր, և 4-րդ, 5-րդ մերժման եզրակացությունների մեջ գրել է հետևյալը. «ոչնչացման համար առանձնացված խմբաքանակում չկա որևէ ապահովադիրի գործ:»: Այսինքն, Կոմիտեն ամեն ինչ ներկայացնում է այնպես ինչպես ինքն է ցանկանում:

բ) գրությունները շփոթել եմ մատյանների հետ, Բողոքներ քննող անձի կողմից 13.11.2018թ. հրավիրված նիստի ժամանակ պարզ դարձավ, որ կարելի էր նշել նաև 35բ կետը, և Կոմիտեի ներկայացուցիչը միտումնավոր չներկայացրեց «Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին» ակտերը, որտեղ 35բ կետի փոխարեն նշված էր 8բ, իսկ Վեդիի փոխարեն նշված էր Արտաշատ:

գ) տարբեր բովանդակության գործերին տվել եմ ցանկի միևնույն համար՝ նախ Կոմիտեի կողմից չի նշվում, թե ինչի մասին է խոսքը, եթե ի նկատի ունի ծրարները, ապա տեղեկացնում եմ, որ ծրարների միջի բանկային վճարման հանձնարարականներն ու ՀԴՄ կտրոնները համապատասխանում են ՀՀ կառավարության 351-Ն որոշման 152 կետին և անկախ նրանից, թե դրանք «Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին» ակտերի մեջ առանձին տողով կգրվեն թե միացված կլինեն «Տնտեսական գործառնության փաստը հավաստող և հաշվապահական գրառումների համար հիմք հանդիսացող սկզբնական փաստաթղթեր..» կետին՝ միևնույնն է մասնագիտական առումով ոչինչ չի փոխվում:

դ) ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով գնման պայմանագրի Հաելված 1 «Ծանոթություն» բացատրությունը ուշադիր չեմ կարդացել: Քաջ տեղյակ լինելով, որ արխիվացման գործեր մնացել են Արտաշատում, Վեդիում, Եղեգնաձորում՝ մատուցման հասցե նշվում է Խորենացի 3,7: Բացի այդ, Արտաշատում և Վեդիում արդեն աշխատանքներ կատարել էի և իմ բազմաթիվ պահանջներից հետո միայն Կոմիտեն Երևան Խորենացի 3,7 հասցեում ինձ տրամադրեց 1200 գործ: Անտրամաբանական է, 20833 ոչնչացման ենթակա գործերից միայն 1200 գործ ունենալ ք. Երևան Խորենացի 3,7 հասցեում և տեխնիկական բնութագրի մեջ որպես ծառայությունների մատուցման վայր նշել՝ ք. Երևան Խորենացի 3,7 հասցեն:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բոլոր գործողություններն անհիմն և անօրինական են:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ն:

4. ՍՑ-ԷՍ-2018/165 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 08.11.2018թ. թիվ 26-3/20362-18 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.11.2018թ. թիվ 1/18-2167872-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Աննա Աղաջանյան Հայրապետի ԱՁ-ի միջև 13.06.2018թ. կնքված N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով գնման պայմանագիրը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ 10.07.2018թ. թիվ 1, 30.07.2018թ. թիվ 2, 18.08.2018թ. թիվ 3, 27.08.2018թ. թիվ 4. 03.09.2018թ. թիվ 5, 28.09.2018թ, թիվ 6, թիվ 7, 09.10.2018թ. թիվ 8, թիվ 9 և թիվ 10 եզրակացությունները, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 05.09.2018թ. թիվ 1-5/323 գրությունը, Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի կողմից 16.11.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, Պատվիրատուի կողմից Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ին ուղղված 26.07.2018թ.,

29.08.2018թ., 18.09.2018թ., 24.09.2018թ., 28.09.2018թ., 19.10.2018թ., 02.11.2018թ., գրությունները և Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի կողմից Պատվիրատուին ուղղված 11.07.2018թ., 24.082018թ., 27.08.2018թ., 29.08.2018թ., 04.09.2018թ., 11.09.2018թ., 17.09.2018թ., 15.10.2018թ., գրությունները.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Աննա Աղաջանյան Հայրապետի ԱՁ-ի միջև 13.06.2018թ. կնքվել է N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է արխիվացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն) համաձայն նույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:
- 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագիր N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան սահմանված ժամկետներով:
- 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում եթե.

- ա) մատուցած ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,
- բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

- 7.9 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է գնման ենթակա առարկայի հետևյալ բնութագիրը.

- անվանումը՝ արխիվացման ծառայություններ.
- տեխնիկական բնութագիրը՝ Պահպանության ոչ ենթակա գործերի /փաստաթղթերի/ արխիվացում՝ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմի մեջ չմտնող և ՀՀ օրենսդրությամբ պահպանության սահմանված ժամկետները լրացած հարկային /փաստաթղթերի պահպանության ժամկետները սահմանված են ՀՀ կառավարության 2006թ. մարտի 9-ի N 351-Ն որոշմամբ/ փաստաթղթերի առանձնացում, ըստ տեսակների և տարիների խմբավորում, կապոցավորում և ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 13-ի N 884-Ն որոշմամբ սահմանված ձևի ակտի կազմում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Պատվիրատուն կարող է փոխել պահպանության ոչ ենթակա արխիվացման գործերի քանակը ըստ ծառայությունների մատուցման վայրերի, պայմանով, որ այդ փոփոխությունները չեն կարող հանգեցնել ընդհանուր քանակի ավելացմանը.

- առավելագույն քանակը՝ 20.833 գործ.
- Մատուցման հասցեները և ժամկետը՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 90 աշխատանքային օր, ք.Երևան,Խորենացու 3,7:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 02.11.2018թ. թիվ 1/1-1/66816-18 գրությամբ Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ին հայտնել է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի միջև 2018 թվականի հունիսի 13-ին կնքված թիվ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով «Պետության կարիքների համար արխիվացման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի» (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մաս հանդիսացող հավելված № 1-ի համաձայն՝ Դուք պարտավոր էիք Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 90 աշխատանքային օրվա ընթացքում առանձնացնել պահպանության ոչ ենթակա 20833 գործ: Սակայն, նախատեսված ժամկետում, աշխատանքը հիմնավորող փաստաթղթերով Ձեր կողմից ներկայացվել է ընդամենը 5098 գործ, միաժամանակ, Ձեր կողմից ներկայացվել է նաև 8060 գործ, որոնք չեն ընդունվել Պատվիրատուի կողմից ակնհայտ թերությունների և

սխալների պատճառով: Նշված թերությունների վերաբերյալ բազմիցս տեղյակ է պահվել Ձեզ, սակայն Դուք կտրականապես հրաժարվել եք շտկել թերություններն ու սխալները:

Պատվիրատուն 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ-1/1-1/62949-18 գրությամբ նախազգուշացրել էր Ձեզ Պայմանագրով նախատեսված պարտավորությունները ամբողջ ծավալով չկատարելու մասին:

Տեղեկացնում ենք, որ Պայմանագրով սահմանված ժամկետում վերը նշված ծառայությունն ամբողջ ծավալով Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի կողմից չի մատուցվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Ելնելով վերոգրյալից, Պայմանագրի 2.1.3 ենթակետի համաձայն, ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը՝ 1.510.585 ՀՀ դրամ չմատուցված ծառայության մասով:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 ենթակետի պահանջները, ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի նոյեմբերի 2-ից միակողմանի մասնակի լուծում է 2018 թվականի հունիսի 13-ին կնքված թիվ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ Պայմանագրի 5.2 և 5.3 կետերի համաձայն՝ Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ից կգանձվի 7.553 ՀՀ դրամ տուգանք և 3.777 ՀՀ դրամ տույժ:»:

Բողոքներ քննող անձը Ընթացակարգի քննության ընթացքում Պատվիրատուի լիազորված ներկայացուցչին առաջարկեց հստակեցնել Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը, որի արդյունքում Բողոքներ քննող անձը արձանագրեց հետևյալը.

Ըստ Պատվիրատուի լիազորված ներկայացուցչի Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերն են՝

1. Ոչնչացման համար առանձնացված ակտի թվով 6860 գործերից պետք է հանվեր 4701 ՀԴՄ կտրոնները կից փաստաթղթերով ծրարները, քանի որ դրանք գործ չեն հանդիսանում:

2. Կատարողը սխալ է որոշել Կոմիտեի հետաքննության վարչության 1200 գործերի պահպանման ժամկետները:

3. Կատարողը խախտել է Պայմանագրի ծառայության մատուցման ժամկետը:

Կողմերը Բողոքներ քննող անձին ներկայացրեցին Պայմանագրի շրջանակներում կազմված արձանագրությունները, եզրակացությունները և փոխադարձ գրությունները.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.07.2018թ. թիվ 1 եզրակացությամբ 6860 գործի վերաբերյալ արձանագրել է.

«Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին ակտը կազմվել է մի շարք թերություններով, այդ մասին Կատարողին տեղյակ է պահվել՝ առձեռն հանձնելով փորձագիտական հանձնաժողովի նիստի արձանագրությունը:»:

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 30.07.2018թ. թիվ 1 եզրակացությամբ 6860 գործի վերաբերյալ արձանագրել է.

«10.07.2018թ. կազմված պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին ակտում գործերի ընդհանուր քանակը սխալ է հաշվարկված, ակտում նշված գործերը չեն համապատասխանում իրականությանը, քանի որ համաձայն ՀՀ կառավարության 13.07.2017թ. թիվ 884-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ կետի 18-րդ ենթակետի դրանք գործ չեն համարվում:»

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 18.08.2018թ. թիվ 3 եզրակացությամբ 1511 գործի վերաբերյալ արձանագրել է.

«13.08.2018թ. կազմված պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին ակտում նշված է, որ ոչնչացման է առանձնացվել նաև Վեդու տարածքային հարկային տեսչության գործերը ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ նման անվանումով տեսչություն գոյություն չի ունեցել: Ակտի ընդհանուր թվից պետք է հանել Արտաշատի տարածքային հարկային տեսչության գործեր, քանի որ տվյալ տեսչությունն ակտում նշված չէ:»:

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 27.08.2018թ. թիվ 4 եզրակացությամբ 1511 գործի վերաբերյալ արձանագրել է.

«Վճարման համար հիմք հանդիսացող 20.08.2018թ. կազմված պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին ակտում նշված է, որ ոչնչացման է առանձնացվել նաև ապահովադիրների գործերը, ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ փորձագիտական հանձնաժողովը պարզել է, որ ոչնչացման առանձնացված խմբաքանակում չկա որևէ մեկ ապահովադիրի գործ:»:

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 03.09.2018թ. թիվ 5 եզրակացությամբ 1511 գործի վերաբերյալ արձանագրել է.

«Վճարման համար հիմք հանդիսացող 20.08.2018թ. կազմված պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին ակտում նշված է, որ ոչնչացման է առանձնացվել նաև ապահովադիրների գործերը, ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ փորձագիտական հանձնաժողովը պարզել է, որ ոչնչացման առանձնացված խմբաքանակում չկա որևէ մեկ ապահովադիրի գործ, այդ պատճառով պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին ակտը չի հաստատվել:»:

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 28.09.2018թ. թիվ 6 եզրակացությամբ 6860 գործի վերաբերյալ արձանագրել է.

«Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի 3.1 կետի Կատարողը ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող հանձնման-ընդունման արձանագրությունը հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ: Ներկայացված արձանագրությունն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չէ: Հաստատված չէ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը կազմելու համար հիմք հադիսացող պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին ակտը:»

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 28.09.2018թ. թիվ 7 եզրակացությամբ 6860 գործի վերաբերյալ արձանագրել է.

«Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի 3.1 կետի Կատարողը ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող հանձնման-ընդունման արձանագրությունը հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ: Ներկայացված արձանագրությունն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չէ: Հաստատված չէ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը կազմելու համար հիմք հադիսացող պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին ակտը:»

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 09.10.2018թ. թիվ 8 եզրակացությամբ 6860 գործի վերաբերյալ արձանագրել է.

«Պատվիրատուին 03.10.2018թ. գությամբ ներկայացված՝ 10.07.2018թ. կազմված Պահպանության ոչ ենթակա փաստատթղթերի առանձնացման մասին ակտի 2-րդ կետում

թույլ է տվել կեղծիք, ՀԴՄ կտրոններով 4701 ծրարները ներկայացվել են որպես գործ: Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի 3.1 կետի պահանջների Կատարողը չի ներկայացրել ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող ակտը:»

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 09.10.2018թ. թիվ 9 եզրակացությամբ 1511 գործի վերաբերյալ արձանագրել է.

«Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի 3.1 կետի պահանջների Կատարողը չի ներկայացրել ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող ակտը:»

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 09.10.2018թ. թիվ 10 եզրակացությամբ 1200 գործի վերաբերյալ արձանագրել է.

«Պատվիրատուին 03.10.2018թ. գությամբ ներկայացված՝ 10.07.2018թ. կազմված Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին ակտում Կատարողը սխալ է որոշել ՀՀ ՊԵԿ հետաքննության վարչության գործերի ոչնչացման ժամկետներն ըստ ՀՀ կառավարության 351-Ն որոշմամբ հաստատված օրինակելի ցանկի: Ակտում վերոնշյալ ցանկի 287-րդ կետի փոխարեն նշվել են 14-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ և 41-րդ կետերը: Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի 3.1 կետի պահանջների Կատարողը չի ներկայացրել ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող ակտը:»:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.07.2018թ. «Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին» ակտում առկա թերությունների վերաբերյալ կազմած թիվ 1 արձանագրության զեկույցում արձանագրված է հետևյալը.

1. ակտի վերևի ձախ անկյունում (կազմակերպության անվանումը) հատվածում պետք է նշված լիներ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 9-րդ բաժին,
2. հաստատում եմ վավերապայմանից պետք է հանել «ԿԱ» հապավումը,
3. հաստատում եմ վավերապայմանում աշխատակազմի ղեկավարի անուն ազգանունը պետք է լիներ (ստորագրությունը, ստորագրության վերածումը) տողին,

4. հաստատում եմ վավերապայմանում թվագրումը ձևակերպվում է տպագրելով միայն տարին, ամսաթիվն ու ամիսը գրվում է փաստաթուղթը ստորագրելուց հետո,

5. քանի որ տարբեր տարիների Մասիսի, Վեդու, Արարատի տարածքային տեսչությունները ունեցել են տարբեր ենթակայություն հետևաբար ակտի ներածական մասում «ՀՀ ԿԱ ՊԵԿ» հապավումը պետք է հանել,

6. ակտի 2-րդ սյունակի առաջին տողից պետք է հանել «Հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 9-րդ բաժին» գրառումը,

7. ակտի առաջին համարի 5-րդ սյունակում սխալ է նշված պահպանության ժամկետների նշումով ցանկի կետը,

8. ակտի 4-րդ, 5-րդ, և 6-րդ հ/հ կարելի է միավորել մեկ համարով քանի որ ցանկում բերված են մեկ վերնագրով,

9. ակտի 8-րդ հ/հ անհրաժեշտ է հստակեցնել՝ փաստաթղթերը վերաբերում են արտասահմանյան թե հանրապետության տարածքում գործուղումներին,

10. ակտի 11-րդ հ/հ նշված գործերի քանակությունը չի համապատասխանում իրականությանը, իրականում դրանք ոչ թե գործ են այլ ծրար,

11. ակտի եզրափակիչ մասում նշված չէ փորձագիտական հանձնաժողովի կազմը:

Ի պատասխան ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.07.2018թ. «Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին» ակտում առկա թերությունների վերաբերյալ թիվ 1 արձանագրության զեկույցի՝ Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ն 11.07.2018թ. գրությամբ հայտնել է հետյալը.

«Տեղեկացնում եմ, որ լիիրավ և պարտաճանաչ կատարել եմ պայմանագրով սահմանված աշխատանքները՝ առաջնորդվելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով և ՀՀ կառավարության 13.07.2018թ. թիվ 884-Ն որոշմամբ: Հետևաբար իմ կողմից կազմած ակտը թերություններ չունի: Հանձնաժողովի կողմից նշված կետերը հիմնականում ոչ էական, առանց հիմնավորման մեկնաբանություններ են, քանի որ հղում չկա համապատասխան կարգավորող օրենքներին կամ կառավարության որոշումներին: Եթե դուք ցանկանում եք այդ ակտը ունենալ այլ ձևաչափով՝ դա այլ հարց է, ուստի անհրաժեշտություն չկա դա ներկայացնել որպես թերություն: 1-6-րդ, 8-րդ և 9-րդ կետերին ի պատասխան կարող եմ

ներկայացնել համապատասխան հակափաստարկներ՝ մեջբերելով օրենքի տվյալ կետերը: Սակայն աշխատանքները արհեստականորեն չդադարեցնելու նպատակով և որպես արդյունավետ համագործակցության նշան, պատրաստ եմ կատարել փոփոխությունները՝ անկախ դրանց օրենքով հիմնավորած լինելու հանգամանքից: Ակնկալում եմ հետագայում Ձեր կողմից համապատասխան ակտիվ համագործակցություն՝ կատարվող աշխատանքների անկանոն ընթացքն ապահովելու հարցում: Անդրադառնալով 10-րդ կետին, նշեմ, որ առաջնորդվել եմ ՀՀ կառավարության 13.07.2018թ. թիվ 884-Ն որոշմամբ, հարկ եմ համարում նշել, որ տվյալ դեպքում մեկ ծրարը մեկ գործ է, և յուրաքանչյուր ծրար լիովին բավարարում է ՀՀ կառավարության 13.07.2018թ. թիվ 884-Ն որոշման մեջ նկարագրված գործ հասկացությանը: Այն է, մեջբերում եմ. «Թղթե հիմքով փաստաթղթերի պահպանության միավոր (գործ) փաստաթղթերի ամբողջություն, անհատ փաստաթուղթ՝ զետեղված մեկ թղթապանակում»: Պարզապես ՀՀ պետական եկամուտների կոմիտեն թղթապանակի փոխարեն ծրար է օգտագործել՝ նկատի ունենալով, որ փոքր չափսերով ՀԴՄ կտրոնները մնացած փաստաթղթերի հետ ավելի հարմարավետ է պահպանել ծրարում, այլ ոչ թե թղթապանակում, ինչպես նաև այն, որ ծրարն ավելի էժան է:

Տեղեկացնում եմ, որ յուրաքանչյուր ծրարն իր մեջ պարունակում է առանձին անհատի դիմում, անձնագրի պատճե, վճարման միջնորդագիր և ՀԴՄ կտրոններ: Արդյո՞ք այս չորս տեսակի փաստաթղթերի փաթեթը կարող է համարվել մեկ տեսակի փաստաթուղթ: Եթե Ձեր կողմից կնշվեն ներքին կարգավորող իրավական ակտեր կամ օրենքի այլ կետեր, ապա խնդրում եմ սեղմ ժամկետում ինձ տեղեկացնել այդ մասին:»:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ի պատասխան Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի 11.07.2018թ. գրության 26.07.2018թ. հայտնել է հետևյալը.

«Վերոնշյալ գրությանը կից ներկայացված պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի (գործերի) առանձնացման մասին ակտում (այսուհետ՝ Ակտ) շտկել եք ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 9-րդ բաժնի փորձագիտական հանձնաժողովի կողմից արձանգրված թերությունների մի մասը:

Սակայն ներկայացված ակտում դեռևս առկա են սխալներ, որոնք ենթակա են շտկման, մասնավորապես Ձեր կողմից ներկայացված ակտում նշվել է, որ ոչնչացման

համար առանձնացվել է նաև Վեդու տարածքային հարկային տեսչության փաստաթղթերը և գործերը, այն ինչ նման հարկային տեսչություն երբևէ գոյություն չի ունեցել:

Բացի այդ հարկ ենք համարում նշել, որ ներկայացված ակտի 9-րդ կետով նշված «Բանկային վճարման հանձնարարագրեր և ՀԴՄ կտրոններ (բոնուսներ)» սյունակում արտացոլված գործերը, համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի № 884-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ կետի 18-րդ ենթակետի՝ չեն կարող համարվել գործ, քանի որ որոշման մեջ հստակ ձևակերպված է գործ հասկացությունը, այն է՝ «փաստաթղթերի ամբողջություն կամ անգամ մեկ փաստաթուղթ տեղակայված առանձնացված թղթապանակում», գործ հասկացության որոշիչը տվյալ պարագայում թղթապանակն է:

Ելնելով վերագրյալից խնդրում ենք հնարավորինս սեղմ ժամկետում վերացնել վերը նշված թերությունները:»:

Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ն ՀՀ պետական եկամուտների կոմիտե ուղղված 24.08.2018թ. և 27.08.2018թ. իր գրություններով հայտնել է, որ Ա/Ձ-ն հարկադիր պարապուրդի է մատնված եղել, քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քարտուղարության բաժնի պետը գտնվել է արձակուրդում և վերջինիս աշխատանքային դաշտ չի տրամադրվել: Ա/Ձ-ն հայտնել է նաև, որ անհրաժեշտ է ստեղծել փորձագիտական հանձնաժողով, որն էլ վերջինիս հետ միասն արձանագրություն կկազմի և կսահմանի այն, որ «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» գործերի պահպանման ժամկետը 5 տարի է, ինչպես նաև Ա/Ձ-ն խնդրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով արխիվացման պայմանագրի ժամկետը երկարաձգել:

Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ն 29.08.2018թ. գրությամբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին հայտնել է հետևյալը.

«Մինչև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի փորձագիտական հանձնաժողովը որոշում կկայացնի և արձանագրություն կկազմի «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» գործերի պահպանման ժամկետի վերաբերյալ, առաջարկում եմ առկա մնացած ոչնչացման ենթակա գործերը արխիվացնեմ, որպեսզի ժամանակն անիմաստ չանցնի:

Պահանջում եմ, ապահովել իմ աշխատանքների անխափանությունը և սպասման օրերի քանակով երկարաձգել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով արխիվացման պայմանագրի ժամկետը:»:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն՝ ի պատասխան Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի 24.08.2018թ. և 27.08.2018թ գրությունների, 29.08.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Վերոնշյալ փաստաթղթերում Դուք նշում եք, որ չեք կարողանում որոշել փորձագիտական արժեքավորման համար Ձեզ տրամադրված գործերի պահպանման ժամկետները և ենթադրում եք, որ դա Ձեր փոխարեն պետք է կատարի Կոմիտեի փորձագիտական հանձնաժողովը, քանի որ ըստ Ձեզ դա նախատեսված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի № 351-Ն որշման 2-րդ կետի «ա» ենթակետով:

Որպես ի գիտություն տեղեկացնում եմ, որ Կոմիտեի փորձագիտական հանձնաժողովը չի կարող ՀՀ կառավարության որոշմանն համարժեք որոշում կայացնել:

Այսպես՝ Ձեր կողմից որպես հիմնավորում վերոհիշյալ որոշման 2-րդ կետի «ա» ենթակետը պարտադրում է պետական արխիվի համալրման աղբյուր հանդիսացող պետական մարմինների մշտական պահպանության փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետները լրանալուց հետո (Համաձայն՝ «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Կոմիտեի մշտական պահպանության փաստաթղթերի ժամանակավոր պահպանման առավելագույն ժամկետ է սահմանվել 7 տարին) հանձնել պետական արխիվ, եթե ցանկով այլ բան նախատեսված չէ, օրինակ՝ ցանկի հետևյալ կետերը 30-րդ, 34-րդ, 35-րդ և այլն, չեն պարտադրում գործերը հանձնել պետական արխիվ մշտական պահպանման: Իսկ պետական արխիվի համալրման աղբյուր չհանդիսացող հիմնարկներում և կազմակերպություններում մշտական պահպանության փաստաթղթերի պահպանման ժամկետների մասին որոշումն ընդունում է հիմնարկի կամ կազմակերպության փորձագիտական հանձնաժողովը, օրինակ՝ համաձայն «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի, կարող են պահատվության կարգով հանձնվել պետական արխիվին:

Վերոգրյալից պարզ երևում է, որ պետական մարմնի փորձագիտական հանձնաժողովը իրավասու չէ որոշել արխիվային փաստաթղթերի պահպանության ժամկետները:

Հարգելի տիկին Աղաջանյան Դուք ցանկանում եք, որ պետական եկամուտների կոմիտեն երկարաձգի պայմանագրի կատարման ժամկետը քանի որ դուք համարում եք, որ մատնված եք եղել հարկադրված պարապուրդի: Տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից Հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 9 բաժում փորձագիտական արժեքավորման արդյունքում կազմված վերջին ակտը թվագրված է 2018 թվականի օգոստոսի 20-ով: Հիշեցնում ենք նաև, որ դուք դեռևս չեք ներկայացրել 2018 թվականի հուլիսի 10-ին կազմված պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի (գործերի) առանձնացման մասին ակտի ճշգրտված տարբերակը: Ելնելով վերոգրյալից փաստորեն դուք դեռ չեք ավարտել Ձեր աշխատանքը Հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 9 բաժնում, ուստի հարկադիր պարապուրդի մասին Ձեր եզրահանգումները առարկայազուրկ են:»:

Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ն ի պատասխան ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 03.09.2018թ. տրված թիվ 5 եզրակացության 04.09.2018թ. գրությամբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ իմ մասնագիտական ակտում նշել եմ ՀՀ կառավարության 351-Ն որոշման համապատասխան հոդվածը: Ապահովադիրների գործեր չլինելը հիմք չէ մերժման համար, քանի որ ՀՀ կառավարության որոշումների մեջ ոչ ոք չի կարող բառերի փոփոխություն կատարել, ես չէի կարող հոդվածի միջից հանել «ապահովադիրներ» բառը, ես իրավունք չունեմ ՀՀ կառավարության որոշումները փոփոխել, ուստի մասնագիտական ակտի մեջ ևս ոչինչ փոփոխել չեմ կարող: Պահանջում եմ վարձատրել կատարածս աշխատանքի դիմաց:»:

Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ն 11.09.2018թ. գրությամբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին հայտնել է հետյալը.

«Ըստ Ձեր աշխատակիցների ք. Երևան, Խորենացի 3,7 հասցեում արխիվացման ենթակա փաստաթղթեր չկան և ինձ ցանկանում են ուղարկել Եղեգնաձոր, մինչդեռ մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրում աշխատանքների մատակարարման վայր նշված էր ք.

Երևան, Խորենացի 3,7 հասցեն, ես չեմ կարող հավելյալ ծախսեր կատարել: Պահանջում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն աշխատանքով ապահովի ինձ ք. Երևան, Խորենացի 3,7 հասցեում:»:

Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ն 17.09.2018թ. գրությամբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքում կազմված «Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին» երկու ակտերը, որտեղ տեղեկացրել եմ, որ եթե ոչնչացման համար առանձնացված գործերում ապահովադիրներ գործեր չկան, դա չի նշանակում, որ ես պետք է ՀՀ կառավարության 351-Ն որոշման 367-րդ կետը փոփոխված տարբերակով գրեի՝ ինչպես սահմանումը տրված է, այնպես էլ պարտավոր եմ լրացնել: Հետևաբար գտնում եմ, որ երեք ընդունման-հանձնման արձանագրությունները մերժելն անհիմն են, անհիմն է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի առաջին երկու ընդունման-հանձնման արձանագրությունները մերժելը և չհաստատելը քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մեջբերած ՀՀ կառավարության 884-Ն որոշման առաջին կետով հաստատված կարգի 2-րդ կետի 18-րդ ենթակետը ծրարներին ընդհանրապես չի վերաբերում, վերոնշյալ կետը վերաբերում է ՀՀ արխիվային հավաքածուի և այլ արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության օգտագործման իրավահարաբերություններին: ՀԴՄ կտրոններ, ֆիզիկական անձի դիմում և վճաման միջնորդագրեր պարունակող ծրարները ՀՀ արխիվային հավաքածուի կազմի մեջ չեն մտնում և որպես գործավարական փաստաթղթեր ոչնչացվում են 5 տարի պահպանվելուց հետո: Այսպիսի պարզաբանում է տվել ՀՀ ազգային արխիվը: Մեկ ծրարը մեկ գործ չհամարելու հիմք չի կարող լինել նաև ցանկացած իրավաբանի գրած որևէ եզրակացություն՝ դրանք ինձ համար ոչ մի իրավական ուժ չունեն, քանի որ նման բան նախատեսված չէ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով գնման պայմանագրով: Ես դիմել եմ նաև փորձագիտական կենտրոն, և ստացել եմ պատասխան, որ իրենք իրավասու չեն մեկ գործի մասին եզրակացություն գրել: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բոլոր հիմքերը և պատճառաբանությունները անհիմն են: Այս մասին ես կրկին գրել եմ իմ կողմից կազմած մասնագիտական ակտի ծանոթության մեջ: Խնդրում եմ հաստատել իմ կազմած

մասնագիտական ակտը և վճարել կատարած աշխատանքի դիմաց: Ես արդեն երկու հաշիվ-ապրանքագիր եմ դուրս գրել: Ինչ վերաբերում է «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» գործերը մերժելու ակտին, հայտնում եմ, որ ակտը չստորագրված մուտքագրել եմ, որպեսզի, երբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն որոշի, որ այդ ձևաչափով ակտը կհաստատվի՝ նոր օրինակ ստորագրված կներկայացնեմ: Ես այս ամենն անում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նախորդ հինգ մերժված ակտերի նման անհիմն հիմնավորում չներկայացնի և ես ստիպված չլինեմ պարզաբանումներ պահանջեմ, այլ ժամանակս ծախսեմ աշխատանքի վրա:

Աշխատանքները կրկին կանգ են առել, ես դիմել եմ ՀՀ պետական եկամուտների կոմիտե, որպեսզի ինձ տրամադրեն աշխատանքներ ք. Երևան Խորենացի 3,7 հասցեում, բայց որևէ պատասխան չեմ ստացել, կրկին գտնվում եմ հարկադիր պարապուրդի մեջ և պահանջում եմ, բոլոր հարկադիր պարապուրդի օրերի քանակով երկարաձգել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրով սահմանված ժամկետը:»:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 24.09.2018թ. թիվ 1-1/55763-18 գրությամբ Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ին հայտնել է հետևյալը.

«13.06.2018 թվականին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի միջև կնքվել է՝ «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծացկագրով պետության կարիքների համար արխիվացման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր»:

Ստորև ներկայացնում ենք Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի (այսուհետ՝ Կատարող) կողմից թույլ տված սխալներն ու թերությունները, որոնք հիմք են հանդիսացել ծառայությունը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթղթերը չստորագրելու համար:

1. Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի № 884 որոշմամբ հաստատված Ձև №4 հավելվածի Ակտի վերևի ձախ հատվածում գրվում է այն կազմակերպության անվանումը, որի ղեկավարը (տվյալ դեպքում ՀՀ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարը) պետք է հաստատի Ակտը, իրականում ներկայացված Ակտում նշված էր գոյություն չունեցող կազմակերպությունների անվանումները,

2. Ակտի վերևի աջ հատվածում (ստորագրությունը, ստորագրության վերծանումը) տողին պետք է գրված լիներ Ակտը հաստատող աշխատակազմի ղեկավարի անվան սկզբնատառն ու ազգանունը,

3. Հաստատում եմ վավերապայմանում թվագրումը ձևակերպվում է տպագրելով միայն տարին, ամսաթիվն ու ամիսը գրվում է փաստաթուղթը ստորագրելուց հետո (Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի կողմից ներկայացված Ակտում նշված է հաստատման 26 հունիսի 2018թ. այն դեպքում երբ տվյալ ակտը ներկայացվել է ՀՀ ՊԵԿ 2018թ. հուլիսի 2-ին, այսինքն ակտն Աղաջանյանը ակնկալում էր, որ ՀՀ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարը կհաստատեր ետին թվով ներկայացված փաստաթուղթը, ինչը հետագայում ինքը կարող էր օգտագործել որպես ՊԵԿ կողմից թույլ տրված պաշտոնական կեղծիք և կարող էր օգտագործվել ՊԵԿ շանտաժի ենթարկելու համար),

4. Ակտի ներածական մասում գրված էր «ՀՀ ԿԱ ՊԵԿ նախկին Մասիսի, Վեդիի, Արարատի տարածքային հարկային տեսչությունների...», քանի որ տարբեր տարիներ վերոնշյալ տեսչություններն ունեցել են տարբեր ենթակայություններ, ապա «ՀՀ ԿԱ ՊԵԿ» հապավումը տեղին չէ (դա կարելի էր հեշտությամբ պարզել, եթե տկն. Աղաջանյանը ղեկավարվեր ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի № 884 որոշման 29-րդ կետի 1) ենթակետով),

5. Ակտի Կառուցվածքային ստորաբաժանումների անվանումները և գործերի վերնագրերը 2-րդ սյունակում գրվում է կազմակերպության ներքին կառուցվածքային ստորաբաժանումների անվանումները, օրինակ՝ Մասիսի տարածքային հարկային տեսչության հաշվապահություն, սպասարկման բաժին և այլն, Ակտում գրված է Հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 9 բաժին,

6. Ակտի առաջին համարի 5-րդ սյունակում սխալ է նշված ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 9-ի № 351 որոշմամբ հաստատված ցանկի (այսուհետ՝ Ցանկ) համապատասխան կետը, նշված է 35բ, իրականում պետք է լիներ 8բ,

7. 29.06.2018թ. մուտք № 49725-18 գրությամբ ներկայացված ակտի 2-րդ կետում գրված էր «հրամանների քաղվածքներ» 1 գործ, նշված չէր տվյալ գործի պահպանման ժամկետը և Ցանկի համապատասխան կետը, իսկ Ակտի 3 կետում նշված էր գործերի քանակը 94, ըստ երևույթին ցանկում չգտնելով համապատասխան կետը, տկն.

Աղաջանյանը հաջորդ 02.07.2018թ. մուտք № 50539-18 գրությամբ ներկայացված ակտում այդ մեկ գործն ավելացրեց 94 գործին՝ խախտելով ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 9-ի № 351 որոշման պահանջները,

8. 02.07.2018թ. մուտք № 50539-18 գրությամբ ներկայացված Ակտի 2-րդ և 11-րդ հերթական համարներով նշված տարբեր բովանդակությամբ գործերին տրվել է ցանկի նույն կետը՝ 152,

9. Չխախտելու համար ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 9-ի № 351 որոշման պահանջները վերոհիշյալ Ակտի 4-րդ, 5-րդ, 6-րդ հերթական համարները պետք է գրվեին մեկ վերնագրով,

10. Ակտի 8-րդ հերթական համարի գործին տրվել է արտասահմանյան գործուղումներին համապատասխանող ժամկետ՝ 5 տարի, իրականում պետք է լիներ հանրապետության տարածքում կատարված գործուղումներին համապատասխան ժամկետ՝ 3 տարի,

11. Ակտի հերթական 11-րդ համարի գործերի քանակը նշվել է՝ 4701, իրականում դրանք ոչ թե գործեր են այլ ծրարներ, հետագա գրություններով տկն Աղաջանյանը փորձում էր որպես հիմնավորում հղում կատարելով ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի № 884 որոշմամբ հաստատված կարգի ընդհանուր դրույթներ բաժնի 2-րդ կետի, 18-րդ ենթակետի (ա) պարբերությանը: Նախևառաջ տվյալ պարբերությունը տալիս է պահպանության միավոր հասկացության բացատրությունն, որին արխիվային գործի մասնագետը հղում չէր կատարի քանի որ ոչնչացման համար առանձնացված ակտում չէր կարող ընդգրկվել պահպանության միավոր, անգամ հղում կատարելով տվյալ ա/ պարբերությանը հստակ սահմանված է, որ գործ է համարվում հետևյալ ձևակերպումը՝ «...փաստաթղթերի ամբողջություն, անհատ փաստաթուղթ՝ տեղակայված առանձնացված թղթապանակում»: Գործ հասկացության պազաբանումը հստակ տրված է ՀՍՏ 105-2007 «Գործավարություն և արխիվային գործ. Տերմիններ և սահմանումներ» ստանդարտի 3.2.11 կետով այն է՝ «մեկ հարցի կամ գործունեության ոլորտին վերաբերող փաստաթղթերի ամբողջություն կամ մեկ փաստաթուղթ՝ զետեղված առանձին կազմի (թղթապանակի) մեջ»,

12. Ակտի եզրափակիչ մասում բացակայում են հանձնաժողովի անդամների անուն ազգանունները, քանի որ տիկին Աղաջանյանը գտնում է, որ փաստաթուղթը ստորագրողը

ձեռագիր պետք է գրի սեփական անուն ազգանունը, ինչը չի համապատասխանում ՀՍՏ 6.3-98 Հայաստանի ստանդարտի պահանջներին,

13. Աննա Աղաջանյանը մուտքի №№ 49725-18, 50539-18, 52669-18, 61678-18 գրություններով ներկայացված Ակտերում նշել էր, որ ոչնչացման է առանձնացվել երբեք գոյություն չունեցած Վեդու տարածքային հարկային տեսչության գործերը, քանի որ Ակտը կազմողն է կրում պատասխանատվությունը իր կողմից պատրաստված փաստաթղթի համար և արխիվային գործի կանոններին համաձայն արխիվային գործի մասնագետը գործերը ոչնչացման առանձնացնելու դեպքում պարտավոր է ուսումնասիրել գործում առկա փաստաթղթերի բովանդակությունն, ինչպես նաև պահպանել ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի № 884 որոշման 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներն, որը պարտադրում է ուսումնասիրել կազմակերպության պատմությունն ու փաստաթղթերի առկայությունը, ինչը տիկին Աղաջանյանը չի կատարել, այլապես չէր ոչնչացնի գոյություն չունեցող կազմակերպության գործերը,

14. Երկու ամսից ավել աշխատելով Արտաշատում՝ տկն. Աղաջանյանը Ակտում չէր նշել, որ ոչնչացման է առանձնացվել Արտաշատի տարածքային հարկային տեսչության գործերը,

15. 13.08.2018թ. մուտք № 61678-18 գրությամբ ներկայացված Ակտով տկն Աղաջանյանն առանձնացրել էր ոչնչացման հարկ վճարողների հետ միասին ապահովադիրների գործերը, սակայն պարզվեց, որ իրականում ոչ մի ապահովադիրների գործեր չի առանձնացվել: ՊԵԿ առաջարկին ներկայացված Ակտից հանել ապահովադիրներ բառը տիկին Աղաջանյանը հրաժարվեց՝ ասելով, որ ինքը չի կարող ՀՀ կառավարության որոշմամաբ հաստատված Ցանկի տվյալ կետում կատարել անգամ մեկ տառի փոփոխություն, սակայն 25.06.2018թ. կազմված Ակտի հետևյալ կետերում նա կատարել է իրեն հարմար ցանկացած խախտում այսպես՝ ակտի №1 հերթական համարի գործերի վերնագրերը սյունակում գրել է ելից-մտից գրություններ ընթացիկ գործունեության հարցերի վերաբերյալ և հղում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի № 351-Ն որոշման հավելվածի 8-րդ կետի բ) ենթակետին: Իրականում վերոհիշյալ կետում նշված է, Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և համայնքային հիմնարկների ու կազմակերպությունների գրություններ ընթացիկ

գործունեության հարցերի վերաբերյալ: Հաջորդը՝ ակտի 3-րդ կետում գրել է դրամական գումարներ և ապրանքանյութական արժեքներ ստանալու (այդ թվում անվավեր) լիազորագրեր, իրականում պետք է լիներ դրամական գումարներ և ապրանքանյութական արժեքներ ստանալու լիազորագրեր (այդ թվում՝ չեղյալ համարված լիազորագրեր): Երաշխիքային նամակներ: Հաջորդը՝ ակտի 4-րդ կետում գրել է գլխավոր գիրք, դրամարկղային գիրք, շրջանառու տեղեկագրեր, իրականում պետք է լիներ գլխավոր գրքեր, մատյան-օրդերներ, օժանդակ և հսկիչ մատյաններ, քարտարաններ, դրամարկղային գրքեր, շրջանառու տեղեկագրեր, աղյուսակներ և այլն: Հաջորդը՝ ակտի 7-րդ կետում գրել է՝ պայմանագրեր, համաձայնագրեր (տնտեսական, գործառնական, աշխատանքային), իրականում պետք է լիներ պայմանագրեր, համաձայնագրեր (տնտեսական, գործառնական, աշխատանքային, նյութական պատասխանատվության, աուդիտի անցկացման) և դրանց ցուցակներ: Հաջորդը՝ ակտի 9-րդ կետում գրել է՝ բանկային վճարման հանձնարարագրեր և ՀԴՄ կտրոններ (բոնուսներ), իրականում պետք է լիներ տնտեսական գործառնության փաստը հավաստող և հաշվապահական գրառումների համար հիմք հանդիսացող սկզբնական փաստաթղթեր՝ կից հավելվածներով (դրամարկղային, բանկային փաստաթղթեր, բանկերի ծանուցագրեր և փոխանցման հանձնարարագրեր, բանկերի քաղվածքներ, աշխատանքային կարգագրեր, աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրեր, ունեցվածքի, հիմնական միջոցների և նյութերի ընդունման, գնման, հանձնման ու դուրսգրման ակտեր, ապրանքանյութական արժեքների հաշվառման անդորագրեր և ապրանքագրեր, կանխավճարային հաշվետվություններ, ավտոմեքենաների պատճեններ, կարգագրեր և այլն): Հաջորդը՝ ակտի 10-րդ կետում գրել է՝ հարկային մարմինների կողմից ստուգման ակտեր արձանագրված և վերականգնված գումարների վերաբերյալ, իրականում պետք է լիներ հարկային մարմինների կողմից ստուգումների և ուսումնասիրությունների անցկացման մասին ծրագրեր, ակտեր, հաշվետվություններ, տեղեկանքներ, զեկուցագրեր և այլ փաստաթղթեր:

16. 24.08.2018թ. մուտք № 65273-18 գրությամբ ներկայացված Ակտով տկն. Աղաջանյանը չկարողանալով Ցանկի կետերով որոշել նյութերով քրեական գործերի հարուցումը մերժելու մասին գործերի պահպանման ժամկետներն անհիմն պահանջ ներկայացրեց ՊԵԿ փորձագիտական հանձնաժողովին, որպեսզի ՓՀ որոշի վերոհիշյալ

գործերի պահպանման ժամկետները քանի որ ըստ նրա դա բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի № 351-Ն որշման 2-րդ կետի «ա» ենթակետի պահանջներից: Իրականում վերոնշյալ որոշման 2-րդ կետ «ա» ենթակետը պարտադրում է Ցանկում ընդգրկված մշտական պահպանմա փաստաթղթերը ՀՀ Արխիվային գործի մասին օրենքի 19-րդ հոդվածի պահանջների համաձայն հանձնել Հայաստանի Ազգային արխիվին, իսկ համալրման աղբյուր չհանդիսացող (պետական եկամուտների կոմիտեն հանդիսանում է համալրման աղբյուր) հիմնարկներում և կազմակերպություններում մշտական պահպանության փաստաթղթերի հետագա պահպանման ժամկետների մասին որոշումն ընդունում է հիմնարկի կամ կազմակերպության փորձագիտական հանձնաժողովը: Վերոգրյալից պարզ երևում է, որ պետական մարմնի փորձագիտական հանձնաժողովը իրավասու չէ որոշել արխիվային փաստաթղթերի պահպանության ժամկետները:

17. Ինչ վերաբերվում է, որ իբր ՀՀ ՊԵԿ սխալ է կազմել ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը, հարկ ենք համարում հայտնել, որ Կատարողը կարող էր օգտվել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) հոդված 10-ի, 5-րդ կետի ընձեռնած հետևյալ հնարավորությունից՝ «Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է», Օրենքի հոդված 29-ի կետ 1-ի՝ «Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում».

Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման

առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը.

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Եթե կատարողը չի օգտվել Օրենքով իրեն ընձեռնված հնարավորություններից չի բողոքարկել պայմանագրի ըստ իրեն սխալ կազմված բաժինները չի առաջարկել պայմանագրի նախագծում կատարել փոփոխություններ, ուրեմն համաձայնվել է իրեն պայմանագրով ներկայացված պահանջներին:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ ՊԵԿ համապատասխան աշխատակիցների կողմից բազմիցս ներկայացված հորդորները վերը թվարկված, ինչպես նաև ընթացիկ շեղումները շտկելու վերաբերյալ կատարող Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի կողմից մերժվել է:

Միաժամանակ հաշվի առնելով Ձեր կողմից ներկայացվող գրթեթ նույնաբովանդակ դիմումների հաճախականությունը, ևս մեկ անգամ հորդորում ենք շտկել առկա թերությունները, որից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել հանձնման - ընդունման արձանագրությունները:»:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ի պատասխան Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի 29.08.2018թ., 04.09.2018թ., 11.09.2018. և 17.09.2018թ. գրություններին 28.09.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հարկ ենք համարում ևս մեկ անգամ նշել, որ պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի (գործերի) առանձնացման մասին ակտն իրավասու անձանց կողմից չի կարող քննարկման առարկա դառնալ, քանի որ ՀՀ ՊԵԿ և Ձեր միջև կնքված պայմանագրից, ինչպես նաև գործող օրենսդրության պահանջներից հստակ բխում է, որ պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի (գործերի) առանձնացման մասին ակտերը կատարողի կողմից պետք է ներկայացվեն բացառապես ստորագրված տարբերակով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով 2013 թվականի հունիսի 13-ի № ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 «Պետության կարիքների համար արխիվացման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի» 2.1.2 կետի ա) ենթակետի պահանջից,

առաջարկում ենք երկօրյա ժամկետում ներկայացնել Ձեր կողմից կազմված ակտերի ճշգրտված և ստորագրված օրինակները, հակառակ դեպքում ՀՀ ՊԵԿ Ձեր կողմից մատուցված ծառայությունը կհամարի անպատշաճ որակի և կձեռնարկի պայմանագրի էությունից բխող գործողություններ:»:

Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ն 15.10.2018թ. գրությամբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին հայտնել է հետյալը.

«Տեղեկացնում եմ, որ Ձեր կողմից ներկայացված գրությունները ամենևին էլ իմ հարցերի պատասխանները չեն: Մեկ անգամ ևս պահանջում եմ վարձատրել ինձ կատարածս աշխատանքի դիմաց: Աշխատանքները 12.09.2018թ. կանգ են առել, ամբողջ օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամսիներին 1200 գործ է տրամադրվել: Խնդրում եմ ապահովել ինձ աշխատանքով և երկարաձգել պայմանագրով նախատեսված ժամկետը:»:

- 15.10.2018թ. գրությամբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին հայտնել է հետյալը.

«Հայտնում եմ, որ իմ կողմից դուրս գրված 6-ից 10-րդ հանձնման-ընդունման արձանագրությունները ՀՀ պետական եկամուտների կոմիտեն մերժել է անհիմն և անօրինական, քանի որ մերժման ոչ մի եզրակացության մեջ խոսք չկա այն մասին, որ իմ մատուցած ծառայությունները չեն համապատասխանում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրին:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն.

- 6-րդ և 7-րդ հանձնման-ընդունման եզրակացություններում, նշել է, որ պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին ակտերը հաստատված չեն, եթե խոսքը էլեկտրոնային ստորագրության մասին է, ապա տեղեկացնեմ, որ ակտերը չպետք է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվեին: Ես ակտերը ներկայացրել եմ գրիչով տորագրված վիճակում: Հանձնման-ընդունման արձանագրությունները էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չլինելը չի նշանակում որ իմ կողմից մատուցած աշխատանքները չեն համապատասխանում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրին:

- 8-րդ հանձնման-ընդունման եզրակացության վերաբերյալ հայտնում եմ, որ 4701 ծրարներից յուրաքանչյուրը ոչ միայն ՀԴՄ կտրոններ են պարունակում, այլ նաև առանձին

անհատի դիմում և միայն մեկ հոգուն վերաբերող վճարման հանձնարարագիր, յուրաքանչյուր ծրար բավարարում է «մեկ հարցի կամ գործունեության ոլորտին վերաբերող փաստաթղթերի ամբողջություն կամ մեկ փաստաթուղթ՝ զետեղված առանձին կազմի մեջ» հասկացությանը: Անկախ նրանից ՀՀ պետական եկամուտների կոմիտեն մեկ ծրարը մեկ գործ կհաշվի թե ոչ, միևնույնն է ՀՀ կառավարության 13.07.2018թ. թիվ 884-Ն որոշմամբ հաստատված «Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին» ակտերի վերնագիրն էլ ինքնին հուշում է, որ միևնույնն է փաստաթղթերի ամբողջություն է՝ զետեղված առանձին կազմի մեջ: Իսկ ոչնչացման համար առանձնացվում են նաև փաստաթղթեր, ոչ միայն գործեր: 8-րդ հանձնման-ընդունման արձանագրության մեջ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նշել է նաև, որ ներկայացված չէ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող ակտը: Տեղեկացնում եմ, որ սա ևս հիմք չէ հանձնման-ընդունման արձանագրությունը չընդունելու համար:

Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող ակտը և հանձնման-ընդունման արձանագրությունը տարբեր փաստաթղթեր են: Հանձնման-ընդունման արձանագրությունը դուրս են գրվում միայն armeps համակարգի միջոցով, իսկ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող ակտը կարող է հանձնվել ցանկացած տարբերակով՝ առձեռն, փոստով:

- 9-րդ հանձնման-ընդունման եզրակացությանը վերաբերող մերժման եզրակացության մեջ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նշել է, որ ներկայացված չէ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող ակտը: Մեկ անգամ ևս տեղեկացնում եմ, որ սա մերժման հիմք չէ:

- 10-րդ հանձնման-ընդունման եզրակացությանը վերաբերող մերժման եզրակացության մեջ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն սխալ է որոշել ՀՀ ՊԵԿ հետաքննության վարչության գործերի ոչնչացման ժամկետներն ըստ ՀՀ կառավարության 351-Ն որոշմամբ հաստատված օրինակելի ցանկի: Մատնանշած 287-րդ կետը վերաբերում է դատական իշխանության գործունեությանը: Ակնառու է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի որոշ աշխատակիցների խոսքերն ավելորդ են, որ ՀՀ ՊԵԿ հետաքննության վարչության գործերը համապատասխանում են 14-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ և 41-րդ կետերին, դա հստակ երևում է գործերը ուսումնասիրելիս, ինչպես նաև այդ մասին պարզաբանում է

տվել ՀՀ ազգային արխիվը, մատնանշելով ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 14.06.2017թ. թիվ 1-06/320-Ա հրամանով հաստատված «Հարկային մարմնի գործունեությամբ առաջացող փաստաթղթերի պահպանության ժամկետների նշումով ցանկի» 24-րդ և 36-րդ կետերը, որոնց պարունակությունը համապատասխանում է ՀՀ կառավարության 351-Ն որոշմամբ հաստատված օրինակելի ցանկի 14-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ և 41-րդ կետերին:

Արդեն չորրորդ ամիսն է ՀՀ պետական եկամուտների կոմիտեն մերժում է իմ կողմից դուրս գրած հանձնման-ընդունման արձանագրությունները, չի վճարում և չի տրամադրում պահանջվող 20.833 գործերը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն իմ կողմից դուրս գրած հանձնման-ընդունման արձանագրությունները մերժելով՝ խախտել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի 2.1.2 ա կետը, քանի որ ոչ մի մերժման եզրակացության մեջ խոսք չկա այն մասին, որ իմ մատուցած ծառայությունները չեն համապատասխանում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրին:»:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 19.10.2018թ. գրությամբ Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ին հայտնել է հետյալը.

«Հայտնում ենք, որ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթղթերը ներկայացվում են պահպանման ոչ ենթակա գործերի առանձնացման մասին ակտերը փորձագիտական հանձնաժողովի կողմից ստորագրվելուց և իրավասու անձի կողմից հաստատվելուց հետո: Քանի որ ակտերում առկա էին մի շարք թերություններ, ինչի մասին Ձեզ տեղեկացվել էր, անհրաժեշտ էր շտկել բոլոր թերությունները, որից հետո միայն ներկայացնել վճարման պահանջ:

Ձեր կողմից արդեն երրորդ անգամ ք. Արտաշատում կազմված նույն թվագրմամբ (10.07.2018թ.), սակայն տարբեր բովանդակություններով ակտ է ներկայացվում: Եթե ներկայացվում է նոր տարբերակ, անհրաժեշտ է նշել վերջին տարբերակը կազմելու թվագրումը: Նույն ակտի վերջում նշված է, որ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ ՊԵԿ) այլևս չի կարող 9-րդ կետում ընդգրկված ծրարների վերաբերյալ հարց բարձրացնել: Տվյալ ակտի 9-րդ կետն ընդհանրապես չի վերաբերվում ծրարների խնդրին: Նույն ակտի 2-րդ կետի 4-րդ սյունակում գործերի քանակը

ավելացել է 4701-ով, այնինչ ակտի վերջում նշված է ընդամենը 6860 փաստաթուղթ և գործ: Պարզ չէ, թե այդ քանակության որ մասն են կազմում գործերը, որ մասը՝ փաստաթղթերը: Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ պայմանագրի հավելված 1-ով որպես չափման միավոր նշված է գործը: Ինչ վերաբերվում է ծրարները գործ համարելուն, հայտնում ենք, որ այդ հարցին ՊԵԿ-ը Ձեզ տվել է սպառիչ պատասխան 18.09.2018 թվականի № 01/1-1/55167-18 ելից գրությամբ:

Գրությամբ ներկայացված հաջորդ՝ 03.10.2018թ. կազմված ակտով, ՊԵԿ հետաքննության վարչության 1200 գործերն առանձնացվել են ոչնչացման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի № 351-Ն որոշմամբ հաստատված ցանկի 14-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ, 41-րդ կետերի համաձայն: Հիշատակված փաստաթղթերի բովանդակությունից բխում է, որ դրանք անհրաժեշտ էր առանձնացնել ըստ պահպանման հետևյալ ժամկետների՝ 3, 5, 10, 15 տարի և մշտական պահպանման, այնինչ պահպանման ժամկետ է սահմանվել 5 տարին, ինչի հիման վրա սույն փաստաթղթերը ոչնչացվել են:

Ձեր 2018թ. հոկտեմբերի 15-ի գրությամբ հայտնում եք, որ ՊԵԿ-ի կողմից մատնանշած՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկի 287-րդ կետը վերաբերում է դատական իշխանության գործունեությանը, ուստի Հայաստանի Հանրապետության դատարանների արխիվային փաստաթղթերը կարգավորելիս չեն կարող ոչնչացման համար առանձնացվել կառավարման համակարգի, հաշվապահական հաշվառման, աշխատանքային հարաբերություններին վերաբերող և այլ բովանդակությամբ փաստաթղթեր, քանի որ դրանք չեն վերաբերում դատական իշխանության գործունեությանը: Նույն տրամաբանությամբ պետք է ոչնչացման առանձնացվեին միայն մաքսային և հարկային գործունեության փաստաթղթերը: Հարկ ենք համարում տեղեկացնել, որ 287-րդ կետը վերաբերվում է ոչ թե գերատեսչական, այլ օրինակելի ցանկին, որտեղ ընդհանրացված են տարբեր մարմիններում ստեղծվող փաստաթղթերն ու գործերը: Հիշեցնում ենք նաև, որ ՊԵԿ-ը իրավապահ մարմին է և իր կանոնադրության համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով իրեն վերապահված գործերով կատարում է հետաքննություն և նախաքննություն:

Տեղեկացնում ենք նաև, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտումով գործերը ոչնչացնելու համար սահմանված է քրեական

պատասխանատվություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 324 հոդվածի 2-րդ կետի՝ ընդհուպ մինչև 2 տարի ազատազրկում:

Հաշվի առնելով Ծառայության մատուցման ընթացքում հայտնաբերված թերությունները՝ ՊԵԿ-ի աշխատակիցները ստիպված էին Կատարողից պահանջել պահպանելու արխիվային գործին վերաբերող Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի պահանջները: Օրինակ, ճիշտ կազմել ոչնչացման համար առանձնացված գործերի ակտը, գրությունները չշփոթել մատյանների հետ, ցանկի վերնագիրը չբաժանել երեք կետի (156 կետը), ճիշտ որոշել գործերի պահպանման ժամկետները, ոչնչացման համար առանձնացված գործերի ակտում Արտաշատի տարածքային հարկային տեսչության փոխարեն չգրել Վեդու տարածքային հարկային տեսչություն, առանձնացնել ոչնչացման ապահովադիրների գործերը, տարբեր բովանդակությամբ գործերին տալ ցանկի միևնույն համարը, պնդել իրեն աշխատանքով ապահովել Խորենացի 3,7 հասցեներում՝ ուշադիր չկարդալով Պայմանագրի Հավելված 1 «Ծանոթություն» բացատրությունը, 2018թ. հոկտեմբերի 15-ին ներկայացնել նոր ակտ՝ 3587 հարկային գործերը ոչնչացման առանձնացնելու վերաբերյալ և, միաժամանակ, պնդել պարտադրված պարապուրդի մասին և այլն:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք 5-օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագրի պահանջներով նախատեսված ծառայության լիարժեք կատարումը հավաստող և պատշաճ ձևով կազմված փաստաթղթերը, հակառակ դեպքում ՊԵԿ-ը ստիպված կլինի Պայմանագրի 2.1.3 կետի պահանջներին համապատասխան՝ միակողմանի լուծել պայմանագիրը:»:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 02.11.2018թ. թիվ 1/1-1/66816-18 գրությամբ Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ին հայտնել է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի միջև 2018 թվականի հունիսի 13-ին կնքված թիվ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով «Պետության կարիքների համար արխիվացման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի» (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մաս հանդիսացող հավելված № 1-ի համաձայն՝ Դուք պարտավոր էիք Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 90

աշխատանքային օրվա ընթացքում առանձնացնել պահպանության ոչ ենթակա 20833 գործ: Սակայն, նախատեսված ժամկետում, աշխատանքը հիմնավորող փաստաթղթերով Ձեր կողմից ներկայացվել է ընդամենը 5098 գործ, միաժամանակ, Ձեր կողմից ներկայացվել է նաև 8060 գործ, որոնք չեն ընդունվել Պատվիրատուի կողմից ակնհայտ թերությունների և սխալների պատճառով: Նշված թերությունների վերաբերյալ բազմիցս տեղյակ է պահվել Ձեզ, սակայն Դուք կտրականապես հրաժարվել եք շտկել թերություններն ու սխալները:

Պատվիրատուն 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ-1/1-1/62949-18 գրությամբ նախազգուշացրել էր Ձեզ Պայմանագրով նախատեսված պարտավորությունները ամբողջ ծավալով չկատարելու մասին:

Տեղեկացնում ենք, որ Պայմանագրով սահմանված ժամկետում վերը նշված ծառայությունն ամբողջ ծավալով Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի կողմից չի մատուցվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Ելնելով վերոգրյալից, Պայմանագրի 2.1.3 ենթակետի համաձայն, ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը՝ 1.510.585 ՀՀ դրամ չմատուցված ծառայության մասով:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 ենթակետի պահանջները, ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի նոյեմբերի 2-ից միակողմանի մասնակի լուծում է 2018 թվականի հունիսի 13-ին կնքված թիվ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ Պայմանագրի 5.2 և 5.3 կետերի համաձայն՝ Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ից կգանձվի 7.553 ՀՀ դրամ տուգանք և 3.777 ՀՀ դրամ տույժ:»:

Միաժամանակ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը 05.11.2018թ. հրապարակել է www.procurement.am կայքում:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի հետ պայմանագիրը միակողմանի մասնակի լուծվել է հետևյալ պահանջները չկատարելու պատճառներով՝ ոչնչացման համար առանձնացված ակտի 6860 ծրարները գործ չեն հանդիսանում, Ա/Ձ-ի կողմից սխալ է որոշվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի

հետաքննության վարչության 1200 գործերի պահպանման ժամկետները, ինչպես նաև Ա/Ձ-ն խախտել է պայմանագրի ծառայության մատուցման ժամկետները: Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ Ա/Ձ-ն առանձնացրել է ոչնչացման գոյություն չունեցող Վեդու հարկային տեսչության գործերը:

Բողոքներ քննող անձի այն հարցին, եթե Ա/Ձ-ի կողմից 6860 գործը հանձնվեր թղթապանակով, այլ ոչ թե ծրարով, արդյո՞ք դա կհամարվեր գործ, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ այո, եթե հանձնվեր թղթապանակով, ապա դա կհամարվեր գործ:

Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին հայտնեց, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից չընդունած 6860 ծրարները համաձայն ՀՍՏ-105-2007 «Գործավարության և արխիվային գործ. Տերմիններ և սահմանումներ» ստանդարտի ևս գործ են համարվում, Ա/Ձ-ն հավելեց նաև, որ բազմիցս Պատվիրատուից պահանջել է վերջինիս տրամադրել թղթապանակներ, սակայն Պատվիրատուի կողմից թղթապանակներ այդպես էլ չեն տրամադրվել: Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ն հայտնեց նաև, որ իր կողմից ներկայացված ակտում նշել է Վեդու տարածքային հարկային վարչություն, ինչը նաև նշված է եղել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.07.2018թ. թիվ 1 արձանագրության զեկույցի 5-րդ կետում: ՀՀ ՊԵԿ հետաքննության վարչության 1200 գործերի պահպանման ժամկետների վերաբերյալ Ա/Ձ-ն հայտնեց, որ նշված գործերի պահպանման ժամկետները որոշել է ՀՀ կառավարության 351-Ն որոշման 14-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ, 41-րդ կետերով և ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 2007թ. հունիսի 14-ի № 1-06/320-Ա հրամանով: Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին հայտնեց նաև, որ մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրում աշխատանքների մատակարարման վայր նշված է եղել ք. Երևան, Խորենացի 3,7 հասցեն, միչդեռ Ա/Ձ-ն աշիատանքներ կատարել է նաև Արտաշատում և Վեդիում, քանի որ Պատվիրատուն վերջինիս հայտնել է, որ ք. Երևան, Խորենացի 3,7 հասցեում արկիվացման ենթակա փաստաթղթեր չկան: Ա/Ձ-ն հավելեց նաև, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քարտուղարության բաժնի պետի արձակուրդում գտնվելու պատճառով հարկադիր պարապուրդի է մատնված եղել և աշխատանքային դաշտ չի տրամադրվել, այդ իսկ պատճառով Ա/Ձ-ն խնդրել է պայմանագրով նախատեսված ժամկետը երկարաձգել:

Բողոքներ քննող անձի այն հարցին, թե արդյոք Պատվիրատուն գրավոր ծանուցել է ԱՁ-ին այն մասին, որ փոփոխվել է ք. Երևան, Խորենացու 3, 7 հասցեում գտնվող պահպանության ոչ ենթակա արխիվացման գործերի քանակը ըստ ծառայությունների մատուցման վայրերը և դրանք գտնվում են Վեդիում կամ Արտաշատում գտնվող հարկային տեսչություններում, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ որևէ գրավոր ծանուցում ԱՁ-ին չի տրամադրվել:

«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ը կողմից 05.09.2018թ. թիվ 1-5/323 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջև առաջացած խնդիրը չի վերաբերում արխիվային գործի բնագավառին և դուրս է մեր իրավասությունների շրջանակից:

Կարող ենք միայն նշել, որ Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ի փաստարկները, որոնք հիմնված են ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի № 884-Ն որոշման համապատասխան կետերի վրա, համոզիչ լինել չեն կարող: Վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգը վերաբերում է ՀՀ արխիվային հավաքածուի և այլ արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման իրավահարաբերություններին: ՀԴՄ կտրոններ, ֆիզիկական անձի դիմում և վճարման միջնորդագրեր պարունակող ծրարները, ինչպես նաև հարկ վճարողների անձնական հաշվի քարտերը ՀՀ արխիվային հավաքածուի մեջ չեն մտնում և որպես գործավարական փաստաթղթեր ոչնչացվում են 5 տարի պահպանելուց հետո:

ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 2007թ. հունիսի 14-ի № 1-06/320-Ա հրամանով հաստատված «Հարկային մարմնի գործունեությամբ առաջացող փաստաթղթերի պահպանության ժամկետների նշումով ցանկի» 24-րդ և 36-րդ կետերի համաձայն քրեական գործի հարցումը մերժելու մասին գործերի պահպանության ժամկետը 5 տարի է և դրանք կարող են ոչնչացվել սահանված կարգով: Նմանատիպ փաստաթղթերի պահպանման ժամկետների մասին որոշում կարող է կայացնել նաև ՀՀ ՊԵԿ փորձագիտական հանձնաժողովը:»:

ՀՍՏ-105-2007 «Գործավարության և արխիվային գործ. Տերմիններ և սահմանումներ» ստանդարտի 3.2.11 կետի համաձայն՝ Գործ է համարվում մեկ հարցի կամ գործունեության

ոլորտին վերաբերող փաստաթղթերի (2.1.3)՝ զետեղված առանձին կազմի (թղթապանակի) մեջ:

ՀՀ կառավարության 2006թ. մարտի 9-ի N 351-Ն որոշման.

• 8-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և համայնքային հիմնարկների ու կազմակերպությունների գրություններ՝ ընթացիկ գործունեության վերաբերյալ փաստաթղթերի պահպանության ժամկետը՝ 5 տարի է.

• 14-րդ կետի համաձայն՝ Իրավական նորմերի պահպանման, վեճերի և իրավական բնույթի այլ հարցերի կարգավորման մասին որոշումներ, ակտեր, տեղեկանքներ, զեկուցագրեր, արձանագրություններ և այլ փաստաթղթերի պահպանության ժամկետը՝ 5 տարի է.

• 15-րդ կետի համաձայն՝ Իրավապահ և դատական մարմիններ ներկայացված փաստաթղթերի պատճենների (հայցադիմումներ, լիազորագրեր, ակտեր, տեղեկանքներ, արձանագրություններ, բնութագրեր, գրություններ և այլն) պահպանության ժամկետը՝ 5 տարի է.

• 16-րդ կետի համաձայն՝ Դատահրավական մարմինների վճիռների և որոշումների կատարման մասին գրությունների պահպանության ժամկետը՝ 5 տարի է.

• 18-րդ կետի համաձայն՝ Իրավական փորձագիտական եզրակացությունների պահպանության ժամկետը՝ 5 տարի է.

• 41-րդ կետի համաձայն՝ Ստուգման, վերստուգման և հետազոտման անցկացման, ինչպես նաև հսկողության կազմակերպման մասին գրությունների պահպանության ժամկետը՝ 5 տարի է.

• 35-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ Հաշվառման (գրանցման) մատյաններ՝ փաստաթղթերի ելքի և մուտքի փաստաթղթերի պահպանության ժամկետը՝ մշտական է:

• 287-րդ կետի համաձայն՝ Կարճված քրեական գործեր և հսկողական վարույթներ, որոնք հարուցվել են.

ա) ոչ մեծ ծանրության հանցագործությունների կապակցությամբ.

- դիտավորությամբ կատարված փաստաթղթերի պահպանության ժամկետը՝ 3 տարի,

- անզգուշությամբ կատարված փաստաթղթերի պահպանության ժամկետը՝ 5 տարի,

բ) միջին ծանրության հանցագործությունների կապակցությամբ.

- դիտավորությամբ կատարված փաստաթղթերի պահպանության ժամկետը՝ 5 տարի.

- անզգուշությամբ կատարված փաստաթղթերի պահպանության ժամկետը՝ 10 տարի.

գ) ծանր հանցագործությունների կապակցությամբ փաստաթղթերի պահպանության ժամկետը՝ 15 տարի.

դ) առանձնապես ծանր հանցագործությունների կապակցությամբ փաստաթղթերի պահպանության ժամկետը՝ մշտական:

ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 2007թ. հունիսի 14-ի № 1-06/320-Ա հրամանի.

- 24-րդ կետի համաձայն՝ փաստաթղթեր (հարուցումներ, տեղեկանքներ, գրություն) իրավապահ և դատական մարմինների հետ քաղաքացիների և կազմակերությունների հարկային պարտավորությունների, հարկային օրենսդրության պարզաբանման, իրավական նորմերի պահպանման և կիրառման, վեճերի և իրավական բնույթի այլ հարցերի մասին փաստաթղթերի պահպանության ժամկետը՝ 5 տարի է:

- 36-րդ կետի համաձայն՝ փաստաթղթեր (հրամաններ, տեղեկանքներ, զեկուցագրեր և այլ) հաստատված ստուգումների (և ուսումնասիրությունների) հանձնարարագրերում փոփոխություններ կատարելու, դրանք հաշվառումից հանելու, քրեական վարույթ իրականացնող մերմինների որոշումների և պահանջների հիման վրա ստուգումներ անցկացնելու և ստուգումների գործընթացի այլ հարցերի վերաբերյալ փաստաթղթերի պահպանության ժամկետը՝ մշտական է:

ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի № 884-Ն որոշման.

- 2-րդ կետի 18-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գործ է համարվում փաստաթղթերի ամբողջություն, անհատ փաստաթուղթ՝ տեղակայված առանձնացված թղթապանակում,

- 29-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ փաստաթղթերի կարգավորման կազմակերպական-նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները՝ կազմակերպության պատմության և փաստաթղթերի առկայության ու ֆիզիկական վիճակի ուսումնասիրում.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Աննա Աղաջանյան Հայրապետի ԱՁ-ի միջև 13.06.2018թ. կնքվել է արխիվային ծառայությունների մատուցման N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով գնման պայմանագիր:
- N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով արխիվացման ենթակա գործերի քանակը սահմանվել է 20.833 գործ:

- N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 աշխատանքային օր:
- N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայության մատուցման վայր է սահմանվել՝ ք. Երևան, Խորենացի 3,7 հասցեն:
- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-05-18/14 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նշվել է ծանութություն այն մասին, որ Պատվիրատուն կարող է փոխել պահպանության ոչ ենթակա արխիվացման գործերի քանակը ըստ ծառայությունների մատուցման վայրերի, պայմանով, որ այդ փոփոխությունները չեն կարող հանգեցնել ընդհանուր քանակի ավելացմանը:
- Աննա Աղաջանյան Հայրապետի ԱՁ-ի կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցվել է՝ 5098 գործ, որոնք Պատվիրատուի կողմից ընդունվել են, ինչպես նաև 8060 գործ, որոնք Պատվիրատուի կողմից չեն ընդունվել:
- Աննա Աղաջանյան Հայրապետի ԱՁ-ի կողմից ներկայացված 6860 գործերը հանձնվել են ծրարներով: Պատվիրատուի կողմից նշված գործերը չեն ընդունվել, քանի որ ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի № 884-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 18-րդ ենթակետի համաձայն դրանք չեն կարող հանդիսանալ գործ:
- Աննա Աղաջանյան Հայրապետի ԱՁ-ի կողմից ներկայացված 1200 գործերը Պատվիրատուի կողմից չեն ընդունվել, քանի որ ԱՁ-ի կողմից սխալ է որոշվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության գործերի պահպանման ժամկետները:
- Պատվիրատուի կողմից Աննա Աղաջանյան Հայրապետի ԱՁ-ն չի ծանուցվել այն մասին, որ փոփոխվել է ք. Երևան, Խորենացու 3, 7 հասցեում գտնվող պահպանության ոչ ենթակա արխիվացման գործերի քանակը ըստ ծառայությունների մատուցման վայրերը և դրանք գտնվում են Վեդիում կամ Արտաշատում գտնվող հարկային տեսչություններում:
- «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 05.09.2018թ. թիվ 1-5/323 գրության համաձայն՝ ծրարները գործ չեն համարվում և հինգ տարի պահպանելուց հետո ենթակա են ոչնչացման:

- «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 05.09.2018թ. թիվ 1-5/323 գրության և ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 2007թ. հունիսի 14-ի № 1-06/320-Ա հրամանի 24-րդ և 36-րդ կետերի համաձայն՝ քրեական գործի հարցումը մերժելու մասին գործերի պահպանության ժամկետը 5 տարի է:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ.

- Աննա Աղաջանյան Հայրապետի ԱՁ-ի կողմից ծրարներով ներկայացված գործերը չեն կարող հանդիսանալ արխիվացման եթակա գործեր, քանի ՀՀ կառավարության 13.07.2017թ. թիվ 884-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման» կարգի 2-րդ կետի 18-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ պահպանության միավոր է համարվում ֆիզիկապես առանձնացված փաստաթուղթը կամ փաստաթղթերի ամբողջությունը, որն ըստ խմբերի բաժանվում է՝ թղթե հիմքով փաստաթղթերի պահպանության միավորի (գործ)՝ փաստաթղթերի ամբողջություն, անհատ փաստաթուղթ՝ տեղակայված առանձնացված թղթապանակում, հետևաբար դրանք չպետք է ուսումնասիրվեին Աննա Աղաջանյան Հայրապետի ԱՁ-ի կողմից:
- Աննա Աղաջանյան Հայրապետի ԱՁ-ի կողմից չպետք է ուսումնասիրվեին նաև Վեդիի և Արտաշատի հարկային տեսչություններում առկա գործերը, քանի որ Պատվիրատուի կողմից ք. Երևան, Խորենացու 3, 7 հասցեում գտնվող պահպանության ոչ ենթակա արխիվացման գործերի քանակը ըստ ծառայությունների մատուցման վայրերը փոփոխելու վերաբերյալ որևէ ծանուցում Աննա Աղաջանյան Հայրապետի ԱՁ-ին չի տրամադրվել, հետևաբար դրանք չեն կարող հանդիսանալ Պայմանագրով նախատեսված գնման ենթակա առարկա և դրանց համապատասխանությունը Պայմանագրի տեխնիկական բնութագրին չէր կարող գնահատվել Պատվիրատուի կողմից:
- Պատվիրատուի կողմից ներկայացված հիմնավորումը, որ Աննա Աղաջանյան Հայրապետի ԱՁ-ի կողմից ուսումնասիրված ՊԵԿ հետաքննության վարչության 1200 գործերն առանձնացվել են ոչնչացման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի № 351-Ն որոշմամբ հաստատված ցանկի 14-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ, 41-րդ կետերի համաձայն և հիշատակված փաստաթղթերի բովանդակությունից բխում է, որ դրանք անհրաժեշտ էր առանձնացնել ըստ պահպանման հետևյալ

ժամկետների՝ 3, 5, 10, 15 տարի և մշտական պահպանման, այնինչ պահպանման ժամկետ է սահմանվել 5 տարին, հետևաբար դրանք ընդունելի չէ, անհիմն է, քանի որ Պատվիրատուի կողմից չներկայացվեց ապացույց այն մասին, որ նշված 1200 գործերում առկա են 5 տարի ժամկետից պակաս կամ ավել պահպանման ենթակա գործեր:

Ինչ վերաբերում է ծառայությունների մատուցման վայրի փոփոխմանը, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հրավերում նշված ք. Երևան, Խորենացի 3,7 հասցեն այլ վայրով փոփոխվելու դեպքում, այն կարող էր փոփոխվել միայն Երևան քաղաքում, այլ ոչ թե հանրապետության տարածքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ արձանագրված հիմնավորումները չէին կարող հիմք հանդիսանալ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.11.2018թ. թիվ 26-3/20362-18 գրությամբ Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**